

Լուսինե Ա. Գևորգյան

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԳԱՂԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

«Մեծ հայրենադարձության» և միջազգային փորձի համատեքստում

Մուտք

Ինչպես հայտնի է, զանգվածային հայրենադարձության իրավա- կան կարգավորման հետ կապված խնդիրները 20-րդ դարում ի հայտ են եկել երկու համաշխարհային պատերազմներից հետո, երբ ռազ- մական գործողությունների հետևանքով հարյուր հազարավոր մար- դիկ ստիպված էին լքել իրենց նախկին բնակության երկրները:

Առաջին աշխարհամարտի ծանր հետևանքներից մեկն էր գաղթա- կանության հոծ զանգվածների ի հայտ գալը, որոնց թիվը հասնում էր 3 միլիոնի: Նրանց զգալի մասը կազմում էին Հայոց ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ փախստականները, որոնք ծանր վիճակում էին հայտնվել իրենց ապաստանած երկրներում: Մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի ջանքերով 1922 թ. Ժնևում հրավիրվեց հատուկ կոնֆերանս այն երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ, ուր գաղթականներ կային, ինչից հետո Ազգերի լիգայի կողմից շրջանառության մեջ դրվեցին այսպես կոչված՝ «նանսենյան անձնագրերը», որոնք ընդունեցին 52 երկր- ների կառավարություններ²: Այս հիմնախնդիրը կրկին ծագեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ հարկադիր աշխատանքների տարված, ինչպես նաև ռազմագերիներ ու փախստականներ դարձած մի- լիոնավոր մարդիկ էին կուտակվել նացիստական Գերմանիայում և նրա գերիշխանության տակ գտնվող երկրներում:

Միգրացիոն գործընթացները ժամանակակից աշխարհի կարևորա- գույն հիմնախնդիրներից են նաև այսօր, երբ պետությունների մի մասը կանգնած է ներգաղթի հոսքերի ինտեգրման, իսկ մյուս մասը՝ արտա- գաղթի հետևանքով երկրի ժողովրդագրական պատկերի փոփոխության առջև: Խորհրդային Միության փլուզման և Ղարաբաղյան պատերազմի

Ե (ՃԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013 ՎԻՄ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.11.2013:
1 Տե՛ս Արզումանյան Մ.Վ., Նանսենը և Հայաստանը, Եր., 1986, էջ 98:
2 Տե՛ս նույն տեղում, էջ 100:

շրջանում, երբ Հայաստան տեղափոխվեցին հարյուր հազարավար հայ փախստականներ, մեր երկիրը նույնպես կանգնեց միգրացիայի հիմնախնդրի առջև: Մակայն տնտեսական ճգնաժամի, շրջափակման, պատերազմական իրավիճակի և այլ առարկայական ու ենթակայական պատճառներով Հայաստանի միգրացիոն գործընթացները հիմնականում դրսևորվեցին ահագնացող արտագաղթի տեսքով:

Պետք է նշել, որ մինչ այդ էլ միգրացիոն գործընթացները կարևոր դեր են խաղացել Հայաստանի կյանքում: Մասնավորապես Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ տասնյակ հազարավոր սփյուռքահայեր ուղղվեցին դեպի Խորհրդային Հայաստան, այդ գործընթացը որակվեց իբրև «Մեծ հայրենադարձություն»³:

1. Ինչի՞ մասին է վկայում միջազգային փորձը

Խորհրդային Հայաստանի և Հայաստանի Հանրապետության միգրացիոն գործընթացների իրավական հիմնախնդիրների ներկա պատմահամեմատական ուսումնասիրության շարժառիթը այսօր մեզանում շրջանառվող «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծն է, նրանում տեղ գտած որոշ անընդունելի և պատմական իրողություններին հակասող դրույթներն ու ձևակերպումները բացահայտելու ցանկությունը:

Նշված հիմնախնդրին անդրադառնալու էլ ավելի հրատապ շարժառիթ է ոչ վաղ անցյալում Իրաքից Հայաստան եկած, իսկ վերջերս Միդիայից տեղափոխված մեր հայրենակիցների առջև ծառայած տարաբնույթ հիմնախնդիրների լուծումները փնտրելու ցանկությունը: Մինչ օրս մեզանում սփյուռքահայերի հիմնախնդիրներին տրվել են իրավիճակային լուծումներ, և դեռևս չի ստեղծվել տվյալ ոլորտը լիարժեք կարգավորող համապարփակ օրենսդրական բազա: Հստակեցված չէ անգամ, թե կոնկրետ դեպքում ճիշտ գերատեսչությունն է ստանձնելու խնդիրների կարգավորման պարտավորությունն ու պատասխանատվությունը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ փորձենք գնահատել ներկայումս Հայաստանում միգրացիոն օրենսդրության շրջանակներում, սփյուռքահայերի իրավունքների կարգավորման ու պաշտպանվածության աստիճանը, ինչպես նաև համեմատական վերլուծության արդյունքում առաջարկել միգրացիոն գործընթացների օրենսդրական կատարելագործման այնպիսի եղանակներ, որոնք արդեն փորձարկվել են Խորհրդային Հայաստանում՝ «Մեծ հայրենադարձության» ժամանակ: Բացի այդ, Իսրայելի, Գերմանիայի, Հունաստանի և այլ երկրների փորձը նույնպես կարող է օգտակար լինել Հայաստանի Հանրապետության համար՝ համապատասխան պետական քաղաքականության մշակման և գործադրման իմաստով:

Բուն հարցի քննարկմանն անցնելուց առաջ նպատակահարմար ենք

3 Մեղիքության Հ., Հայրենիք-Սփյուռք անչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985: Տե՛ս նաև՝ Հակոբյան Հ.Վ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Եր., 2000:

գտնում նախ՝ անդրադառնալ «**հայրենադարձություն**» և «**ներգաղթ**» եզրույթների սահմանմանը: Բոլոր հետազոտողները համակարծիք են այն հարցում, որ հայրենադարձությունը արտաքին միգրացիայի տեսակ է, ինչի արդյունքում մարդիկ հատում են միջպետական սահմանները և մշտական բնակություն հաստատում այլ երկրներում: Սակայն «հայրենադարձություն» եզրույթի ավելի ստույգ սահմանման հարցում հետազոտողների շրջանում բացակայում է միասնական, ընդունված կարծիքը, և տարբեր հեղինակների մոտեցումները հաճախ հակադրվում են մեկը մյուսին: Ունանք հայրենադարձություն են համարում անձի վերադարձը նախկին քաղաքացիության պետություն, իսկ մյուսները՝ նրա ծագման վայր՝ հայրենիք, որտեղից վտարվել է տարբեր պատճառներով⁴:

Օրինակ՝ լեհ հետազոտող **Պ. Հուտը** 1939–1956 թթ. արտագաղթած լեհերի վերադարձը Լեհաստան չի համարում հայրենադարձություն, քանզի, նրա կարծիքով, վերադարձողները ժամանում էին ոչ թե իրենց նախկին հայրենիք, այլ Լեհաստանի Ժողովրդական Հանրապետություն, որից անջատվել էին ներգաղթող լեհերի որոշ նախկին բնակավայրեր: **Պ. Հուտն** այս գործընթացի համար սահմանել է նոր եզրույթ՝ «**իմպատրիացիա**» (**անգլ. impatriation**), այսինքն՝ ներգաղթ հայրենիք: Իմպատրիացիան, **Պ. Հուտի** սահմանմամբ, տվյալ պետության որոշակի ազգության արտասահմանում ծնված և դաստիարակված քաղաքացիների՝ հասարակական կառույցների միջոցով կամ սեփական նախաձեռնությամբ ներգաղթի գործընթացն է ազգային պետության տարածք: Ընդ որում, նա առանձնացնում է վերաբնակվողների երկու խումբ՝ Լեհաստանից կամավոր կամ հարկադրաբար հեռացած լեհերի ոչ մեծաքանակ ավագ սերնդի ներկայացուցիչներին և արդեն Լեհաստանից դուրս ծնված ու մեծացած նրանց մեծաքանակ ժառանգներին⁵: Սակայն կան նաև այս տեսակետին հակադարձողներ, որոնք նշում են, թե սա ավելի շատ գաղափարախոսական մոտեցում է, և նույն տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում վերջին շրջանում Լեհաստան վերադարձողները նույնպես չպետք է համարվեն հայրենադարձներ, քանզի այսօրվա Լեհաստանը փոխել է իր կարգավիճակը՝ մտնելով Եվրամիության մեջ⁶: Սակայն նման ծայրահեղականացումը բացարձակապես տեղին չէ, քանզի Լեհաստանը, Եվրամիության անդամ դառնալով, պահպանել է իր պետական տարածքը և ինքնիշխանությունը:

Հատկանշական է, որ վերը նշված խնդիրն առկա է նաև Հայոց ցեղասպանության հետևանքով տարբեր երկրներում հայտնված՝ այդ հանցագործությունը վերապրած արևմտահայերի և նրանց բազմաքանակ ժառանգների Հայաստան ներգաղթելու պարագայում: Նմանությունները տվյալ դեպքում ակնհայտ են, և պատահական չէ, որ այս խնդրին անդրադարձել են նաև հայ հետազոտողները:

Խորհրդահայ պատմագրության մեջ տարագիր հայերի՝ հայրենիք

4 Stiu Ковалев М.П., Репатриация как вид миграции: методологические проблемы исследования, “Вестник Томского государственного университета”, Томск, 2009, № 327, с.42. http://sun.tsu.ru/mminfo/00006_3105/327/image/327-042.pdf

5 Տե՛ս նույն տեղում:

6 Տե՛ս նույն տեղում:

վերադառնալու հարցի լուծումը Ազգերի Լիգայում ծնված դեղատոմսով (երբ նրանք պետք է վերադառնային ոչ թե Արևմտյան Հայաստան, որտեղից տեղահանվել էին, այլ Խորհրդային Հայաստան) բնութագրվել է իբրև «հայրենադարձություն»⁷: Սակայն խորհրդահայ հետազոտողներից Հ. Հակոբյանը հետխորհրդային շրջանում դա համարել է յուրօրինակ ներգաղթ, քանզի բռնագաղթի ենթարկված հայերը վերադառնում էին ոչ թե իրենց հայրենիքը՝ Արևմտահայաստան, որտեղ մնացել էին նրանց օջախները և ունեցվածքը, այլ Արևելյան Հայաստան: Նրա կարծիքով իսկական հայրենադարձությունը, որը ճանաչված է միջազգային իրավական պրակտիկայում, պահանջում է, որ տարագիր անձը վերադառնա իր նախկին ապրելավայրը և ետ ստանա այն ամենը, ինչը հարկադրված է եղել լքել⁸:

Ըստ Հ. Հակոբյանի՝ քանի որ հայրենիք վերադառնալու իրավունքը հաստատող հատուկ կոնվենցիաներ չկան, ուստի մնում է այն ուղղակիորեն բխեցնել գլխավորապես մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերից, կամ էլ հենվել տարբեր կոնվենցիաների ու պետությունների միջև տարբեր ժամանակներում ստորագրված զանազան երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերի առանձին հոդվածների վրա⁹:

Հայրենադարձության գործընթացի պայմանագրային կարգավորման օրինակներ կարելի է համարել ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի միջև 1945 թ. փետրվարի 13-ի, ԽՍՀՄ-ի և Բելգիայի միջև 1945 թ. մարտի 13-ի, ԽՍՀՄ-ի և Ֆրանսիայի միջև 1945 թ. հունիսի 29-ի միջպետական համաձայնագրերը, որոնցով նախատեսվում էր փոխադարձ աջակցություն ցուցաբերել պայմանավորվող պետությունների քաղաքացիների տուն վերադարձին: Այն դեպքերում, երբ հայրենադարձությունը չունի պայմանագրային կարգավորում, պետք է կարգավորվի շահագրգիռ պետությունների ներքին օրենսդրությամբ: Սակայն տվյալ գործընթացը չպետք է զուգակցվի նախկին պետության քաղաքացիության հարկադիր փոփոխմամբ:

2. Հայրենադարձություն, ներգաղթ, էթնիկ ներգաղթ

Հաշվի առնելով այն իրողությունը, որ միգրացիոն ոլորտում կատարվում է հասկացությունների անհարկի նույնականացում, ինչի արդյունքում ստեղծվում է խառնաշփոթ իրավիճակ, հարկ ենք համարում անդրադառնալ «հայրենադարձություն» և «ներգաղթ» եզրույթների հարաբերակցության հարցին:

Ինչպես հայտնի է, «**հայրենադարձություն**» (**ռեպատրիացիա**) հասկացությունը (բաղկացած է լատ. *re* – կրկին և *patria* – հայրենիք բառարմատներից) նշանակում է ռազմագերիների, տեղահանված անձանց, փախստականների և արտագաղթածների հայրենիք վերադարձը՝ քաղա-

7 Մեղիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985:

8 Տե՛ս Հակոբյան Հ.Վ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, էջ 264:

9 Տե՛ս նույն տեղում, էջ 33:

քացիական իրավունքների վերականգնմամբ¹⁰: Համադրելով տարբեր աղբյուրներում նշված եզրույթներին տրված տարաբնույթ սահմանումները՝ հանգում ենք հետևյալ եզրահանգմանը. **հայրենադարձությունը ազգային պատկանելություն կամ ինքնագիտակցություն ունեցող անձանց զանգվածային վերադարձն է, մշտական բնակություն հաստատելն ու նրանց իրավունքների վերականգնումն իրենց հայրենիքում, որտեղից նրանք վտարվել են տարբեր պատճառներով:**

Ինչ վերաբերում է «ներգաղթ» եզրույթին, ապա ընդունելի ենք համարում հետևյալ սահմանումը. «ներգաղթը»՝ **իմիգրացիան (լատ. imigrare – հաստատվել), մի պետության քաղաքացու մուտքն է այլ պետություն՝ մշտական բնակության կամ երկար ժամանակով հաստատվելու համար¹¹:**

Այս երկու եզրույթների ակնհայտ տարբերություններն են՝

ա) հայրենադարձության դեպքում ազգային պատկանելությունն ու ինքնագիտակցությունը պարտադիր պայման են, իսկ ներգաղթի դեպքում ոչ,

բ) հայրենադարձության դեպքում խոսքը ոչ թե որևէ պետություն մուտք գործելու, այլ հայրենիք վերադառնալու մասին է, որտեղից տվյալ անձինք հարկադրաբար վտարվել են,

գ) հայրենադարձությունը ենթադրում է մշտական բնակության հաստատում հայրենիքում, իսկ ներգաղթի պարագայում դա կարող է լինել նաև ժամանակավոր,

դ) հայրենադարձության դեպքում խոսքը հայրենադարձվողների կորցրած իրավունքների վերականգնման մասին է, մինչդեռ ներգաղթի դեպքում ակնհատ է նոր իրավունքների ձեռքբերման հանգամանքը:

Ինչպես լեհերի՝ Լեհաստանի Ժողովրդական Հանրապետություն, այնպես էլ արևմտահայերի՝ Խորհրդային Հայաստան գալու պարագայում այս երկու եզրույթները ամբողջությամբ չեն արտացոլել երկու էթնիկ խմբերի՝ իրենց ազգային պետություն մուտք գործելու գործընթացները, ուստի ի հայտ է եկել նոր եզրույթի շրջանառման անհրաժեշտությունը: Տվյալ գործընթացի հատկանիշներից ելնելով, գտնում ենք, որ դրան առավել ճշգրիտ կերպով համապատասխանում է «էթնիկ ներգաղթ» եզրույթը, որը սահմանել ենք հետևյալ կերպ. **էթնիկ ներգաղթը դեպի իրենց ազգային պետություն նույն ազգային¹² խմբի ներկայացուցիչների զանգվածային հոսքն ու տվյալ երկրում ժամանակավոր կամ մշտական բնակություն հաստատելն է:**

Ինչպես տեսնում ենք, էթնիկ ներգաղթը պարունակում է թե՛ հայրենադարձության և թե՛ ներգաղթի տարրերի միաձուլումը, ինչն էլ հաճախ շփոթմունք է առաջացնում: Մինչդեռ էթնիկ ներգաղթը հայրենադարձությունից տարբերվում է նրանով, որ ի տարբերություն վերջինիս, կոնկրետ ազգային կամ կրոնական խմբի ներկայացուցիչների հոսքն

10 Стів Ушаков А. Н., Толковый словарь современного русского языка, М., 2005, с. 876: Стів Իսևն՝ Захаренко Е.Н., Камарова Л.Н., Нечаева И.В., Новый словарь иностранных слов, М. 2006, с. 551.

11 Стів նույն տեղում, էջ 233:

12 Հրեաների դեպքում՝ կրոնական խմբի:

ուղղվում է ոչ թե դեպի հայրենիք, այլ դեպի պետություն, թեկուզ՝ ազգային: Բացի այդ, էթնիկ ներգաղթի պարագայում խոսքը ոչ թե կորցրած իրավունքների վերականգնման, այլ նոր իրավունքների ձեռքբերման մասին է: Եվ վերջապես՝ էթնիկ ներգաղթի ժամանակ բնակությունը հաստատվում է ժամանակավոր կամ մշտական, իսկ հայրենադարձությունը ենթադրում է միայն մշտական բնակություն:

Այսպիսով՝ էթնիկ ներգաղթը չի կարող համարվել լիարժեք հայրենադարձություն, այլ կարող է դիտվել իբրև նրա առաջին փուլ, որովհետև էթնիկ ներգաղթը հնարավորություն է ընձեռում հայրենագրված խմբին ազգային պետության ներսում պահպանել իր տեսակը մինչև լիարժեք հայրենադարձության իրագործումը:

Անփոփեղով սահմանումների և դրանց տարբերությունների քննարկումը՝ կարծում ենք, որ ինչպես Խորհրդային Հայաստանում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, այնպես էլ այսօր Հայաստանի Հանրապետությունում, սփյուռքահայերի ներհոսքը պետք է դիտարկել որպես էթնիկ ներգաղթ: Ուստի Հայաստանի Հանրապետությունից նրանց՝ Արևմտյան Հայաստան ուղղվելն ու այնտեղ մշտական բնակություն հաստատելը կամբողջականացնի ու վերջնական կդարձնի վերադարձի գործընթացը, և այդ դեպքում միայն կիրականանա հայրենադարձությունը:

3. «Մեծ հայրենադարձության» դասերը

Սփյուռքահայերի ժամանակակից ներգաղթը Հայաստան հիմնականում պայմանավորված է նրանց նախկին բնակության երկրների ներքաղաքական ցնցումներով և սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմամբ. այն ունի լուրջ բնույթ և ընթանում է տարերային ու անկազմակերպ: Մինչդեռ Երկրորդ աշխարհամարտից հետո սփյուռքահայերի «Մեծ հայրենադարձություն» կոչված ներգաղթը Խորհրդային Հայաստան ծրագրված ու զանգվածային բնույթ ուներ: Օգտվելով հետպատերազմյան իրավիճակից, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը նպատակահարմար գտավ վերսկսել պատերազմից առաջ ընդհատված սփյուռքահայերի ներգաղթը Հայաստան՝ այդ հարցով միջնորդելով Խորհրդային Միության կառավարության առջև¹³:

1945 թ. նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը ընդունեց սփյուռքահայերի զանգվածային ներգաղթ կազմակերպելու մասին որոշում, որին 1946 թ. փետրվարի 22-ին հետևեց սփյուռքահայերի ներգաղթի նախապատրաստման աշխատանքներին ուղղված՝ «Արտասահմանից հայերի Խորհրդային Հայաստան ներգաղթելու պրակտիկ միջոցառումների մասին» որոշման ընդունումը: Դրանից ելնելով՝ 1946 թ. սկիզբներին ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատին առընթեր ստեղծվեց հանձնաժողով, որը ՀԽՍՀ կառավարության հետ մեկտեղ ղեկավարելու էր սփյուռքահայերի ներգաղթի առնչությամբ

13 Տես **Ստեփանյան Ա.**, Հայրենադարձության հայկական փորձը (1946-1948 թթ.), <http://hayrenadardz.org/armenuhi-stepanyan-2.html>

արտասահմանում իրականացվող գործնական աշխատանքները¹⁴: Համաձայն այդ որոշման՝ մշակվեցին կոնկրետ հրահանգներ, որոնցով ներգաղթի գործնական աշխատանքները նախապատրաստելու և իրականացնելու ժամանակ ղեկավարվելու էին ինչպես ԽՍՀՄ ԱԳԺԿ-ին կից ստեղծված ներգաղթի հանձնաժողովը, այնպես էլ արտասահմանում ԽՍՀՄ ներկայացուցչությունները: Սփյուռքահայերի Հայաստան ներգաղթի կազմակերպման գործընթացը պարբերաբար ուղեկցվում էր իրավական ակտերի ընդունմամբ, որոնք սահմանում էին պետական մարմինների լիազորություններն ու պարտականությունները: Սակայն սփյուռքահայերի իրավունքները կարգավորող առանձին համապարփակ իրավական ակտ այդպես էլ չընդունվեց, թեև «Մեծ հայրենադարձության» կազմակերպման ժամանակ գրքույկների տեսքով հրատարակվեցին տեղեկատվական ձեռնարկներ, որոնցում մատնանշվում էին Հայաստան ներգաղթողների իրավունքներն ու արտոնությունները, հարց ու պատասխանի ձևով պարզաբանվում էին աշխատանքին, առևտրին, անհատական սեփականությանը, ժառանգությանը և այլ ոլորտներին վերաբերող հարցեր¹⁵, որոնք այսօր էլ արդիական են Սփյուռքից Հայաստան եկած մեր հայրենակիցների համար:

Ինչ վերաբերում է սփյուռքահայերի Հայաստան տեղափոխվելու գործնական աշխատանքներին, ապա պետք է նշենք, որ 1945 թ. դեկտեմբերի 8-ից ՀԽՍՀ Ժողկոմխորհին առընթեր ստեղծվել էր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե (հակիրճ՝ Ներգաղթի կոմիտե): Նախապատրաստական աշխատանքները բարելավելու նպատակով Ներգաղթի կոմիտեն անհրաժեշտ էր գտնում, որ այն համայնքներում, որոնցից առաջին հերթին էր նախատեսվում կազմակերպել հայերի փոխադրումը, ստեղծվեն տեղական կոմիտեներ, որոնք տվյալ համայնքներում գործելու էին Ներգաղթի կոմիտեի տեղական մարմինների իրավունքներով¹⁶: Համայնքներում տեղական կոմիտեների ստեղծումից հետո սկսվեցին հայրենիք վերադարձողների ցուցակագրման աշխատանքները:

Ներգաղթի կոմիտեից զատ ՀԽՍՀ Ժողկոմխորհին առընթեր ստեղծվեց Վերաբնակեցման վարչություն, որը զբաղվելու էր արդեն ներգաղթած հայերի՝ Հայաստանի քաղաքներում ու գյուղերում տեղավորման, նրանց առաջնահերթ խնդիրների կարգավորման հարցերով:

Այսպիսով, ներգաղթի նախապատրաստական փուլը, որն իր մեջ ընդգրկում էր համապատասխան մարմինների ստեղծումը, նրանց լիազորությունների հստակեցումը և այլն, ավարտվեց 1946 թ. հունիսի 23-ին՝ հենց այն օրը, երբ Խորհրդային Հայաստան ժամանեցին սփյուռքահայերի առաջին խմբերը:

ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը ստեղծեց նաև հատուկ հանձնախմբեր՝ սփյուռքահայերի կենցաղային և աշխատանքային պայմանները,

14 Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք աննշությունները և հայրենադարձությունը, էջ 181:

15 Տե՛ս Տեր Միքայելյան Գ., Ներգաղթողին գրքոյկ, տե՛ս նաև՝ «Ճանչանք Հայրենիքը» և «Ներգաղթը և ինչ պետք է գիտնալ մեկնելէ առաջ, Մատենաշար թիւ 1», Փարիզ 1947:

16 Տե՛ս Մելիքսեթյան Հ., նույն տեղում, էջ 180:

վիճակը մանրամասնորեն ուսումնասիրելու համար¹⁷: Եղածներից բացի ստեղծվեցին նոր մարմիններ, որոնց ուսումնասիրությունների արդյունքում պարզվելու էր Խորհրդային Հայաստան ներգաղթածների իրական վիճակը, որը հեռու էր իդեալական լինելուց: Ներգաղթի հիմնական թերություններից ու բացթողումներից կարելի է առանձնացնել այն, որ սփյուռքահայերին բնակարանով և աշխատանքով ապահովելը երբեմն կատարվում էր տեղացիների հաշվին, ինչը պետք է բացատրել գլխավորապես խորհրդային կառավարության մոտ ինտեգրման քաղաքականության բացակայությամբ¹⁸:

Ներգաղթածներից շատերը նշում էին, որ սոցիալական դժվարությունները սկզբնական շրջանում թերևս հաղթահարելի էին, սակայն առավել դժվար էր ընտելանալ օտարացմանը, անվստահությանը, թերազնահատմանը և ներգաղթածի ու տեղացու նկատմամբ եղած տարբերակված մոտեցմանը: Վիճակն էլ ավելի բարդացավ, երբ ԽՍՀՄ-ում վերսկսվեցին քաղաքական հալածանքներն ու արքորը, ինչից զերծ չմնացին նաև ներգաղթածները¹⁹: ԽՍՀՄ-ում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հարգման սկզբունքի անտեսման ֆոնի վրա անձի ապահովության և անձեռնմխելիության երաշխիքներ էլ առավել չէին կարող լինել կապիտալիստական աշխարհից եկածների համար, քանի որ նրանք, այսպես թե այնպես, համարվում էին կապիտալիզմի «բացիլակիրներ», այսինքն՝ առնվազն պոտենցիալ թշնամիներ, ուստիև պետք է գտնվեին պետական անվտանգության մարմինների մանրագնին տեսադաշտում՝ դրանից բխող բոլոր հետևանքներով²⁰: Թեև ԽՍՀՄ Սահմանադրությունում դեկլարատիվ կերպով ամրագրված էին մի շարք քաղաքացիական իրավունքներ՝ հանգստի, կրթության, անձի անձեռնմխելիության, նամակագրության գաղտնիության և այլն, սակայն ակնհայտ է, որ այդ ժամանակ հաստատված ամբողջատիրական վարչակարգի պայմաններում մարդու իրավունքները և հիմնական ազատությունները անպաշտպան էին:

Անշուշտ, սփյուռքահայերի՝ Խորհրդային Հայաստան ներգաղթի որոշումը քաղաքական էր և հիմնականում նպատակ էր հետապնդում «Մեծ հայրենադարձության» միջոցով բարելավել Հայաստանի ժողովրդագրական պատկերը: Մյուս կողմից էլ՝ այս գործընթացով արևմտյան տերությունները, չցանկանալով Հայ Դատին արմատական լուծում տալ և դրանով մեկընդմիջտ վճռել հայերի հայրենիք վերադառնալու խնդիրը, սփյուռքահայերի՝ Խորհրդային Հայաստան տեղափոխվելու հաշվին մասամբ սրբագրեցին Լոզանի խայտառակությունը և պահպանեցին իրենց իմիջը²¹:

Չնայած «Մեծ հայրենադարձության» լուրջ թերություններին, այն չա-

17 Տե՛ս նույն տեղում, էջ 218:

18 Տե՛ս Ստեփանյան Ա., Հայրենադարձության հայկական փորձը (1946-1948 թթ.), <http://hayrenadardz.org/armenuhi-stepanyan-2.html>

19 Տե՛ս Ստեփանյան Ա., Քաղաքական բռնաձեռնումները Հայաստանում 1920-1953 թթ., Եր., 1999, էջ 220-222:

20 Տե՛ս Հակոբյան Հ.Վ., Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, էջ 257:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 264:

փազանց կարևոր խթան հանդիսացավ հայ ժողովրդի հետագա զարգացման համար, քանզի դրա արդյունքում արձանագրվեցին հետևյալ դրական միտումները.

Առավել ինտենսիվ կերպով ընթացավ Խորհրդային Հայաստանի ապաքինումը Երկրորդ աշխարհամարտի պատճառած մարդկային ու նյութական վնասներից և ժողովրդագրական առումով երկիրը վերածվեց միատարր ազգային միավորի;

Բնակեցվեցին նոր տարածքներ, խոշոր բնակավայրերի, առաջին հերթին՝ Երևանի ընդլայնման ու դրանց արդյունաբերական կենտրոնների վերածման գործընթացն ընդունեց էլ ավելի արագ տեմպեր;

Սփյուռքահայերն իրենց գիտելիքներով նպաստեցին Հայաստանի տնտեսության զարգացմանը, հայրենի հողի վրա հայ մշակույթը հարստացավ նրանց կողմից ներմուծված նոր գծերով և դրսևորումներով, իսկ կենցաղը ստացավ ավելի ազգային նկարագիր:

4. Հայրենադարձության իրավական կարգավորման միջազգային փորձը

Հիմնախնդիրն ավելի համակարգված ներկայացնելու համար հարկ ենք համարում անդրադառնալ հայրենադարձության և էթնիկ ներգաղթի ասպարեզներում այլ երկրների ու ժողովուրդների կուտակած փորձին, առանձնացնելով այն օրինակները, որոնք, մեր կարծիքով, ավելի մոտ են մեր իրականությանը, ուստիև կարող են ուսանելի և օգտակար լինել մեզ համար:

ա) Լեհաստանի փորձը

Հայրենադարձության իրավական մեխանիզմների մշակման և կիրառման առումով հետաքրքրական է Լեհաստանի փորձը: Նախկին բնակության երկրներից Լեհաստան հատուկ հայրենադարձության վիզայով ժամանող անձինք հենց սահմանը հատելու պահին ստանում են լեհական քաղաքացիություն: Լեհաստան մուտք գործելուց հետո հայրենադարձները նյութական օգնություն են ստանում երկրի պետական բյուջեից, նրանց միանվագ տրվում է նպաստ, որով հատուցվում են ճանապարհի, երկրում հիմնվելու, ընթացիկ և անչափահաս երեխաների՝ Լեհաստանի ուսումնական հաստատություններում սովորելու ծախսերը: Լեհաստան գալու ճանապարհածախսը կարող է հայրենադարձին հատուցվել նաև հյուպատոսի կողմից՝ անմիջապես վիզա ստանալու պահին: Բնակարանների վարձակալման կամ դրանց վերանորոգման ծախսերը նույնպես հատուցվում են պետական բյուջեից: Հայրենադարձները հնարավորություն ունեն անվճար սովորելու լեհերեն, իսկ նոր օրենքի համաձայն՝ անձինք, որոնք դիմում են հայրենադարձության վիզա ստանալու համար, հնարավորություն կունենան լեհերենի դասընթացների հաճախել իրենց նախկին բնակության երկրում: Հայրենադարձության վիզա ունենալու հավակնություն կարող է ստանալ լեհական ծագում ունեցող անձը, ով

ՀԻՄՆ ԱԲԳՎԵՐ

Ե (ԺԵ) քաղթ, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

մինչև օրենքի ընդունումը մշտապես բնակվել է այն երկրներում, որոնք թվարկված են օրենքում, կամ գտնվել է Լեհաստանում՝ սովորելով լեհական բուհում, ստանալով բնակության իրավունք: Հայրենադարձ կարող են ձանաչվել նաև լեհական ծագում ունեցող այն անձինք, որոնք Լեհաստանում բնակվելու իրավունք են ստացել մինչև 1991 թվականը կամ առնվազն հինգ տարի բնակվել են նախկին ԽՍՀՄ ասիական հանրապետություններում: Ըստ Լեհաստանի «Հայրենադարձության մասին» օրենքի՝ այն անձը, ով մինչև 2001 թ. հունվարի 1-ը լեհական քաղաքացիություն է ստացել 1962 թ. փետրվարի 15-ի քաղաքացիության մասին օրենքի հիման վրա, իսկ Լեհաստանում բնակվելու թույլտվություն ստանալու պահին հանդիսացել է ԽՍՀՄ կամ նրա կազմալուծվելուց հետո առաջացած պետություններից որևէ մեկի քաղաքացի, կարող է ձանաչվել հայրենադարձ²²:

բ) Գերմանիայի փորձը

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը նույնպես հայրենադարձության խնդիրներին բախվեց Երկրորդ աշխարհամարտից հետո: 1954 թ. ընդունվեց վերաբնակիչներ ընդունելու մասին օրենքը, որով ազգությամբ գերմանացիներին հնարավորություն էր ընձեռվում վերադառնալ պատմական հայրենիք: Չնայած դրան՝ Խորհրդային Միությունից միայն 1961 թ. սկսվեց գերմանացիների հայրենիք վերադառնալու առաջին ալիքը: Դրա շարունակությունը եղավ 1970-ական թվականներին, սակայն այն որևէ համեմատության եզր չունի 1990-ական թվականների հետ, երբ տասնյակ հազարավոր գերմանացի հայրենադարձներ կուտակվել էին Գերմանիայի դեսպանատների առջև՝ իրենց փաստաթղթերը ձևակերպելու և հայրենադարձվելու համար: 1993 թ. ուժի մեջ մտավ նոր օրենք, որում ներգաղթող գերմանացիներին արդեն անվանում էին ուշ վերաբնակիչներ, իսկ 1997 թ. ընդունվեց գերմաներենի իմացության թեստը սկզբում՝ մասնակի, իսկ հետագայում՝ բոլոր ընտանիքների համար:

Բռնագաղթվածների մասին Գերմանիայի դաշնային օրենքով հստակեցվում է, թե ո՞վ և ի՞նչ հատկանիշներով է համարվում ուշ վերաբնակիչ: Ուշ վերաբնակիչների ընտանիքների և նրանց անդամների կարգավիճակը և համապատասխանաբար նաև իրավունքները կարգավորվում են օրենքի 4, 7 և 8 հոդվածներով: Տվյալ օրենքով ուշ վերաբնակիչ կարող են համարվել միայն ազգությամբ գերմանացիները, այսինքն՝ նրանք, ովքեր ունեն գերմանական ծագում (դրա համար բավական է, որ ծնողներից որևէ մեկը՝ հայրը կամ մայրը գերմանացի լինեն), կամ նրանք, ում ծնողների կամ հարազատների կողմից ներարկվել են գերմանացուն հատուկ հատկանիշներ՝ գերմաներեն լեզուն, գերմանական դաստիարակությունը, և վերջապես՝ նա, ով գերմանական ինքնագիտակցություն ունի:

Ուշ վերաբնակիչները Գերմանիայում ստանում էին գերմանական քաղաքացիություն, ինտեգրման նպաստ և պետք է անցնեին 6-ամսյա գերմաներենի անվճար դասընթաց: Բացի դրանից, նրանց համար նախա-

²² Տե՛ս <http://migrants.in/polsha/zakon-polshi-repatriaciya.html>

տեսվում էր ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրում, ինչպես նաև դրանց մարման շահավետ պայմաններ և այլ արտոնություններ²³:

զ) Հունաստանի փորձը

Պոնտոսի հույների ցեղասպանությունից հետո նրանց մի մասը վերաբնակվեց ԽՍՀՄ-ի տարածքում, հիմնականում՝ Հյուսիսային Կովկասում, սակայն հետագայում ստալինյան բռնաճնշումների հետևանքով վերջիններս ցրվեցին ողջ երկրի տարածքով: Բռնաճնշումներից խուսափելու նպատակով շատ հույներ փոխում էին իրենց ազգանունները, մոռացության էին տալիս մայրենի լեզուն: Դա էր պատճառը, որ ԽՍՀՄ փուլզուլից հետո Հունաստան տեղափոխվող հույների գերակշռող մասը չէր տիրապետում հունարենին, իսկ հունական իշխանություններն էլ չէին պնդում մայրենի լեզվի իմացության վրա: Երկրի սահմանադրության և Լոզանի պայմանագրի դրույթների համաձայն՝ Հունաստանը թույլ է տալիս իր հայրենակիցներին և նրանց ժառանգներին վերադառնալ պատմական հայրենիք և դառնալ երկրի լիիրավ քաղաքացիներ²⁴:

Այս գործընթացը շատ նման է Հայաստան արևմտահայերի և նրանց ժառանգների էթնիկ ներգաղթին, սակայն հույներն այն հայրենադարձություն են անվանում, թեև Պոնտոսի հույների բուն հայրենիքը Հունաստանը չէ, և նրանք նույնպես կորցրել են իրենց հայրենիքը:

դ) Իսրայելի փորձը

Ի տարբերություն մյուս երկրների՝ հրեական պետությունում ոչ թե քաղաքացիության մասին օրենքն է դարձել հայրենադարձության մասին օրենքի հիմքը, այլ ընդհակառակը՝ Իսրայելի քաղաքացիության հիմքում դրվել է հենց հայրենադարձությունը:

Իսրայելի կնեսետը 1950 թ. հուլիսի 5-ին ընդունեց «Վերադարձի մասին» օրենքը, որով հռչակվում էր յուրաքանչյուր հրեայի հայրենադարձվելու իրավունքը: Օրենքը իրավաբանորեն ամրագրեց սինոիզմի գաղափարախոսությունը, որն ընկած է նաև Իսրայելի՝ իբրև ազգային պետության, առաջացման և գոյության հիմքում: «Վերադարձի մասին» օրենքը հանդիսացավ Իսրայելի քաղաքացիություն շնորհելու մասին 1952 թ. օրենքի իրավական հիմքը: Դրա համաձայն՝ յուրաքանչյուր հրեա ինքնաբերաբար ստանում է երկրի քաղաքացու կարգավիճակ, եթե նա Իսրայել է ժամանել «Վերադարձի մասին» օրենքի հիման վրա:

«Վերադարձի մասին» օրենքը չի տարածվում այն անձանց վրա, ովքեր զբաղվել են հրեա ժողովրդի դեմ ուղղված գործունեությամբ կամ որոնք սպառնալիք են ներկայացնում երկրի անվտանգությանն ու հասարակական կարգին: Գործնականում այս տեսակի տակ են դասվում նաև այն անձինք, որոնք հանցագործություններ են կատարել արտասահմանում և ձգտում են արդարադատությունից խուսափել՝ ապաստան գտնելով Իսրայելում:

23 Տե՛ս Иммиграция (Репатриация) в Германию <http://www.businessseuro.ru/imigracgerm.html>
24 Տե՛ս Иммиграция (Репатриация) в Грецию <http://www.businessseuro.ru/imigracgreecia.html>

ՀԻՄՆԱԲԱՐԱՐԵՐ
Ե (ԺԵ) քաղթի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

ԽՍՀՄ-ից հրեաների զանգվածային հայրենադարձության ընթացքում շուրջ 300000 մարդ, որոնք մայրական գծով հրեաներ չէին, հայտնվեցին Իսրայելում, սակայն երկրի օրենսդրությունն այս հարցում հիմնվում է կրոնական սկզբունքների վրա, և դրանից ելնելով՝ այդ անձինք չեն համարվում իսկական հրեաներ: Դա է պատճառը, որ հրեական հասարակության մեջ քննարկվում է «Վերադարձի մասին» օրենքում ներկա իրավիճակից բխող համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը²⁵:

Անփոփելով հայրենադարձության իրավական կարգավորման գործում վերը նշված երկրների կուտակած փորձը՝ գտնում ենք, որ հաշվի առնելով մեր առանձնահատկությունները, դրանց որոշ մեխանիզմներ կարող են տեղայնացվել ու արդյունավետ կիրառվել Հայաստանում:

5. «Մեկ պատուհանը»՝ որպես ժամանակակից միգրացիոն գործընթացների արդյունավետ կարգավորման գործիք

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը կանգնած է միգրացիոն լուրջ մարտահրավերների առջև, որոնցից առաջնահերթն, անշուշտ, երկրից նկատվող արտագաղթի մտահոգիչ տեմպերն են: Հաշվի առնելով առկա իրողությունները՝ Հայաստանի Հանրապետությունը նախևառաջ պետք է գործուն քայլեր ձեռնարկի այդ տեմպերը նվազեցնելու ուղղությամբ և անհրաժեշտ ու բավարար հիմքեր նախապատրաստի հակառակ գործընթացի ծավալման համար:

Մյուս կողմից, սկզբում Իրաքի, իսկ հետո էլ՝ Սիրիայի համայնքներից մեր հայրենակիցների վերջին անկազմակերպ ներհոսքերն ազդանշան էին, որ Հայաստանը լուրջ անելիքներ ունի նաև էթնիկ ներգաղթի ուղղությամբ: Ակնհայտ է, որ այս հիմնախնդիրների կարգավորման գործում Հայաստանը պետք է հաշվի առնի միգրացիոն գործընթացների կարգավորման ժամանակակից մեթոդներն ու մեխանիզմները, որոնք հաջողությամբ փորձարկվել ու կիրառվում են տարբեր երկրներում՝ նկատի ունենալով տեղական առանձնահատկությունները:

Ժամանակակից իրավական գործիքներից է այսպես կոչված «**Մեկ պատուհանի**» սկզբունքը: Ապաստանի և միգրացիայի ընթացակարգերը պարզեցնելու և արագացնելու նպատակով որոշ եվրոպական երկրներում ներդրված այդ սկզբունքի համաձայն՝ միգրացիոն գործընթացների բոլոր փուլերը կառավարվում են մեկ հաստատության կողմից: Օրինակ՝ Գերմանիայում բնակվելու և աշխատելու թույլտվության «Մեկ պատուհանը» գործում է երկրի հողերի (սահանգների) կառավարությունների՝ օտարերկրացիների հարցերով զբաղվող մարմինների, իսկ Լատվիայում՝ Քաղաքացիության և միգրացիոն հարցերի ծառայության միջոցով: 2005 թվականից «Մեկ պատուհանը» գործում է նաև Իռլանդիայում, որտեղ Քաղաքացիության և ներգաղթի ծառայությունը զբաղվում է ապաստանի, ներգաղթի, քաղաքացիության և վիզաների, ինտեգրացիայի, հայրենադար-

25 Տե՛ս «Закон о возвращении», <http://www.eleven.co.il/article/11585>

ծուխյան և այլ հարցերով²⁶:

2005 թ. Եվրոպական հանձնաժողովի Ինտեգրացիայի ընդհանուր օրակարգի առաջարկությունների համաձայն՝ ինտեգրացիայի նպատակով երրորդ երկրների քաղաքացիների հետ շփվելու հանրային և մասնավոր ծառայությունների կարողությունների հզորացման համար, ի դեմս ինտեգրման հարցերով զբաղվող նախարարությունների ու գերատեսչությունների, համանման «Մեկ պատուհան»-ներ ներդրվեցին նաև Պորտուգալիայում և Հունաստանում: Պորտուգալիայի Ներգաղթյալների աջակցության ազգային երկու կենտրոններում Լիսաբոնում և Պորտուում, ներգաղթի հետ կապված բոլոր ծառայությունները մեկ տանիքի ներքո մատուցում են 5 նախարարությունների ու ծառայությունների (օտարերկրացիների և սահմանների ծառայություն, աշխատանքային պայմանների մարմին, սոցիալական ապահովություն, կենտրոնական ռեգիստրի գրասենյակ, առողջապահություն և կրթություն) մասնաճյուղերն ու գրասենյակները: Այդ կենտրոններում համակարգված ձևով տրամադրում են իրավաբանական խորհրդատվություն, աջակցում ընտանիքի վերամիավորմանը, նպաստում աշխատաշուկային ինտեգրվելուն և այլն:

Հունաստանում այսպես կոչված՝ «Քաղաքացիների սպասարկման կենտրոններ» են ստեղծվել երկրի ողջ տարածքում, որպեսզի դյուրացվեն քաղաքացիների շփումները կառավարության՝ ինտեգրման հարցերով և բնակվելու թույլտվությամբ զբաղվող ծառայությունների հետ: Այդ կենտրոններում համագործակցված ձևով աշխատում են ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև արդարադատության, կրթության, կրոնի հարցերի, առողջապահության, սոցիալական հարցերի և այլ նախարարությունների ու գերատեսչությունների համապատասխան ստորաբաժանումները:

Ֆրանսիան և Իսպանիան ապաստանի և միգրացիայի հետ կապված իրավասությունները կենտրոնացրել են մեկ առանձին մարմնի՝ Ապաստանի և միգրացիայի նախարարության (համապատասխանաբար՝ ներգաղթի, ինտեգրման և համազարգացման նախարարություն և աշխատանքի և ներգաղթի նախարարություն) ձեռքերում²⁷:

Կարծում ենք, որ Հայաստանում ապաստանի և միգրացիայի հարցերի շուրջ նման միասնական մոտեցման որդեգրումը և «Մեկ պատուհանի» սկզբունքի կիրառումը հնարավորություն կտա ավելի արդյունավետ ու նպատակաուղղված քաղաքականություն իրականացնել թե՛ հայրենադարձության և թե՛ էթնիկ ներգաղթի ուղղությամբ:

26 Տե՛ս Վերխտեր Է., ԵՄ փորձը ապաստանի և միգրացիայի քաղաքականությունների ինստիտուցիոնալ կազմակերպման հարցերում, էջ 30-31: http://www.euadvisorygroup.eu/sites/default/files/Comparative%20Analysis%20on%20Asylum%20and%20Migration%20Policies_arm.pdf
27 Նույն տեղում, էջ 29:

6. «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգի» և «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերլուծություն և առաջարկներ

Անկախության վերականգնումից հետո Սփյուռքի մեր հայրենակիցների մի մասը փորձեց բնակվել Հայաստանում, սակայն ոչ բոլորը կարողացան հաղթահարել երկրում մշտական բնակություն հաստատելու և ինտեգրվելու հետ կապված դժվարությունները:

Ինչպես հայտնի է, ՀՀ կառավարության կազմում 2008 թ. հոկտեմբերի 1-ից գործում է Սփյուռքի նախարարությունը, որի կողմից իրականացվել են սփյուռքահայության հիմնախնդիրների լուծմանը և մասնավորապես նրանց ներգաղթին միտված որոշ ծրագրեր, որոնք թեև անհրաժեշտ էին, բայց ոչ բավարար: Սփյուռքահայության ներգաղթի խնդիրներն արդյունավետ լուծելու համար նախևառաջ անհրաժեշտ է վերլուծել Հայաստանի Հանրապետությունում առկա միգրացիոն իրավիճակն ու միտումները, գործող օրենսդրությունն իր թերություններով ու բացերով, որից հետո միայն հնարավոր կլինի մշակել միգրացիոն հիմնախնդիրների և մասնավորապես՝ հայրենադարձության ու էթնիկ ներգաղթի ոլորտի ռազմավարությունն ու մարտավարությունը: Միգրացիոն ոլորտի այս ուղղությունների ռազմավարությունը հստակեցնելիս անպայմանորեն պետք է հաշվի առնվի ինչպես «Մեծ հայրենադարձության», այնպես էլ միջազգային փորձը, որպեսզի հնարավորինս խուսափենք հին սխալների կրկնությունից և թույլ չտանք նորերը:

Այսօր Հայաստանը չունի միգրացիոն բոլոր խնդիրները կարգավորող համապարփակ օրենք, և բնական է, որ չկան առանձին օրենքներ ոչ էթնիկ ներգաղթի, ոչ էլ հայրենադարձության մասին: Մինչև 2007 թ. օտարերկրացիների միգրացիայի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվային բազան հնացած էր և չէր համապատասխանում միջազգայնորեն ընդունված և արդյունավետ գործարկվող մեխանիզմներին ու ՀՀ Սահմանադրության առանձին դրույթներին: Միգրացիայի տարբեր խնդիրներ այսօր էլ կարգավորվում են առանձին օրենքներով ու կառավարության որոշումներով: Ցավոք, ստեղծված իրավիճակը չէր կարող բացասական ազդեցություն չունենալ նաև սփյուռքահայության ներգաղթի իրավական կարգավորման վրա: Համակարգված մարմնի, ինչպես նաև օրենքի բացակայությունը այսօր էլ թույլ չի տալիս արդյունավետ լուծումներ տալ ներգաղթած սփյուռքահայերի խնդիրներին:

2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի միջոցով ընդունված սահմանադրական բարեփոխումներով՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեց երկքաղաքացիության ինստիտուտը, սակայն դրանից հետո էլ տվյալ ոլորտի օրենսդրական բազան կարգավորվում է ոչ թե մեկ համապարփակ օրենքով, այլ մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով: Օրինակ՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է օտարերկրացիների՝ Հայաստան մուտք գործելու, նրա տարածքում գտնվելու և բնակվելու, ՀՀ տարածքով տարանցիկ երթևեկելու և այլ հարաբերու-

թյուններ, մեկ այլ՝ ՀՀ «Քաղաքացիության մասին» օրենքը կարգավորում է քաղաքացիություն ստանալու, վերականգնելու, երկքաղաքացիության և այլ հարաբերություններ, իսկ ՀՀ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը կարգավորում է փախստականի ձանաչման, ապաստանի տրամադրման հետ կապված հարաբերությունները: Վերոհիշյալ իրավական ակտերը առանց տարբերության տարածվում են Հայաստան ներգաղթած բոլոր օտարերկրացիների՝ ինչպես օտարազգիների, այնպես էլ մեր հայրենակիցների վրա:

Ստացվում է, որ այսօր մենք իրավական առումով կանգնած ենք էթնիկ ներգաղթի գրեթե նույն հիմնախնդիրների առջև, ինչ 1940–ականների «Մեծ հայրենադարձության» ժամանակ: Երկու դեպքում էլ բացակայում է համապարփակ օրենսդրական բազան, որը կապահովի սփյուռքահայերի ներգաղթի հիմնախնդիրների իրավական կարգավորումը՝ նրանց առանձնացնելով օտարազգի ներգաղթողներից:

Սփյուռքի նախարարությունը «Հայերն այսօր» նախագծի շրջանակներում փորձ է կատարում կայքի միջոցով²⁸ իրենց իրավունքների մասին տեղեկատվություն տրամադրել՝ սփյուռքահայ մեր հայրենակիցներին ներկայացնելով ՀՀ օրենքներից քաղված դրույթներ և նրանց ուղղորդելով համապատասխան գերատեսչություններ, որոնք պետք է զբաղվեն իրենց խնդիրներով: Մինչդեռ, այդ ամենի փոխարեն «Մեկ պատուհան» սկզբունքի ներդրմամբ զգալիորեն կպարզեցվեն ու կարագացվեն սփյուռքահայերի ներգաղթի ընթացակարգերը:

2010 թ. դեկտեմբերի 9–ին ՀՀ Կառավարության հավանությանն արժանացավ «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգը» (այսուհետ՝ Հայեցակարգ), որն ըստ փաստաթղթի՝ «հայկական պետականության ամրապնդմանը, հայ ժողովրդի միասնությանը և հայ ինքնության պահպանմանն ու ամրապնդմանը նպաստող համակարգ է, որի կենտրոնում գտնվում է հայրենիքում մշտական բնակություն հաստատել ցանկացող հայ անհատը»²⁹: Հայեցակարգից ելնելով՝ 2011 թ. մայիսի 12–ին ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացվեց «Հայրենադարձության մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Պետք է նշել, որ Նախագիծը քննության է ենթարկվել ՀՀ առանձին գերատեսչությունների կողմից, և նրանք ներկայացրել են որոշ դիտողություններով՝ համապատասխան եզրակացություններ: Թեև դրանց հիման վրա նախագծում կատարվել են մի շարք փոփոխություններ, այդուհանդերձ, կարծում ենք՝ Նախագծում դեռևս կան որոշակի թերություններ, որոնք ձգգրտման կարիք ունեն:

Միանգամից նշենք, որ նման կերպ վերնագրելով «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգը» և դրանից բխող՝ «Հայրենադարձության մասին» օրենքի նախագիծը՝ մենք ակնհայտորեն վիրավորում ենք արևմտահայերի ու նրանց ժառանգների զգացմունքները, քանզի ցեղասպանության ենթարկված արևմտահա-

28 Տե՛ս <http://old1.hayernaysor.am/1353528078>

29 ՀՀ կառավարության նիստի արձանագրություն N 48, 9 դեկտեմբերի 2010 թ. www.mindiaspora.am

յության համար իրական հայրենադարձությունը ոչ թե ազգային պետությունն ներգաղթելն է, այլ սեփական հայրենիք՝ Արևմտյան Հայաստանն վերադառնալը: Այսօրվա Հայաստանի Հանրապետության տարածքը հայ ժողովրդի կորցրած հայրենիքի սուկ մեկ տասներորդ մասն է: Ցեղասպանության արդյունքում իրենց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը լքած տարագիր հայության ժառանգները չեն կարող միանշանակ ընդունել Հայաստանի Հանրապետությունը՝ որպես վերադարձի միակ հանգրվան³⁰: Հայրենադարձության կազմակերպման քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետության կողմից չպետք է անտեսվի հայ ժողովրդի պատմական հայրենիքի մեծ մասի բռնազավթման փաստը, քանզի Թուրքիայի Հանրապետությունը կարող է օգտագործել այդ հանգամանքը մեր դեմ՝ պահանջատիրության հարցերը բարձրաձայնելու պարագայում³¹:

Հայեցակարգում, ինչպես նաև Նախագծում շեշտը դրվում է միայն ներգաղթողների հայկական ծագման, կամավոր վերադարձի և Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատելու վրա՝ շրջանցելով «վերադարձ դեպի պատմական հայրենիք» ձևակերպումը, այսինքն՝ իրական հայրենադարձության կարևորագույն հատկանիշը: Այս տեսանկյունից երկու փաստաթղթերով էլ սեփական հայրենիքը կորցրած արևմտահայերի և նրանց ժառանգների տեղափոխվելը ՀՀ կարող է դիտվել որպես «էթնիկ ներգաղթ» իրենց ազգային պետություն՝ հետագայում պատմական հայրենիք հայրենադարձվելու նպատակով, իսկ Խորհրդային Հայաստանը կամ Հայաստանի Հանրապետությունը լքած հայերի վերադարձը՝ որպես հայրենադարձություն: Այսինքն՝ տվյալ պարագայում անհրաժեշտ է հստակ տարանջատում կատարել այս երկու խմբերի միջև և հայ ժողովրդի իրավունքներից ու շահերից ելնելով՝ կիրառել ճիշտ եզրույթներ: **Հարկավոր է քաջ գիտակցել, որ եթե սփյուռքահայերի՝ Հայաստան էթնիկ ներգաղթի դեպքում ծագում են նրանց ինտեգրման, ապա Հայաստանից հեռացած ՀՀ նախկին քաղաքացիների հայրենադարձության դեպքում՝ վերջիններիս վերահիտեզրման խնդիրները:**

Հայեցակարգում **հայրենադարձությունը** սահմանվում է որպես այլ պետություններում բնակվող հայկական ծագումով անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատելու գործընթաց: Նույն փաստաթղթում «հայրենադարձ» հասկացությունը սահմանվում է հետևյալ կերպ՝ **հայրենադարձն** այն անձն է, որն ունի հայկական ծագում, չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ հանդիսանալով օտարերկրյա քաղաքացի՝ ընդունել է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և «Հայրենադարձության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընթացակարգն անցնելուց հետո կամավոր մշտական բնակություն է հաստատում Հայաստանի Հանրապետությունում՝ ստանալով հայրենադարձի կարգավիճակ³²:

30 Տե՛ս «Դեպի Արարատ հայրենադարձության ազգային ծրագիրը՝ Հայաստանի զարգացման հիմնարար պայման», «Եզերք» մատենաշար, N 1, Եր., 2006, էջ 24:

31 Տե՛ս **Հակոբյան Հ.Վ.**, Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, էջ 260:

32 Տե՛ս ՀՀ կառավարության 2010 թ. դեկտեմբերի 9-ին հաստատված հայեցակարգ, www.

Ինչպես տեսնում ենք, Հայեցակարգի հիմքում դրված է ոչ թե աշխարհասփյուռ հայության գանգվածային հայրենադարձության կազմակերպումն ու դրա կանոնակարգումը, ինչն այդ գործընթացի կարևորագույն հատկանիշներից է, այլ Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու ցանկություն հայտնած հայերի Հայաստան գալը³³: Տվյալ պարագայում այդ գործընթացն առանձնակի կանոնակարգում չի պահանջում, քանզի դա կատարվում է ինքնաբերաբար, մինչդեռ գանգվածային էթնիկ ներգաղթի կամ հայրենադարձության դեպքում պետությունից պահանջվում են ավելի լուրջ ու համակարգված նախապատրաստական աշխատանքներ: Ընդ որում, խոսքը ոչ միայն զուտ կազմակերպչական հարցերի կարգավորման, այլև ներգաղթողների ինտեգրման համար համապատասխան բարոյահոգեբանական պայմանների ու մթնոլորտի ստեղծման մասին է: Այս առումով ուսանելի է «Մեծ հայրենադարձության» փորձը, երբ մեծ խմբերով ներգաղթած մեր հայրենակիցները կարողացան համեմատաբար հեշտությամբ հաստատվել Հայաստանում նաև այն պատճառով, որ նրանց համար ստեղծվեցին իրենց հարազատ միջավայրերը: Իսկ ներկայումս ՀՀ անհատական ներգաղթողների շրջանում նկատվում է անընդհատ հոսունություն, քանզի նրանցից շատերը, չկարողանալով ինտեգրվել իրենց համար անսովոր միջավայրում, լքում են Հայաստանը՝ կամ վերադառնալով նախկին բնակության երկրներ, կամ էլ տեղափոխվելով երրորդ պետություններ:

Հայեցակարգի **2-րդ գլխի 8-րդ կետում** նախատեսված է հայրենադարձներին դասակարգելու անհրաժեշտությունը ըստ որոշակի խմբերի, բացի այդ, հայրենադարձների ցանկության դեպքում կամ լիազոր պետական մարմնի որոշմամբ նրանց տեղաբաշխումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության տարբեր համայնքներով³⁴: Այս դրույթի ամրագրումը շատ տեղին է՝ «Մեծ հայրենադարձության» սխալները չկրկնելու համար, երբ ներգաղթած քաղաքաբնակ և գյուղաբնակ սփյուռքահայերի հակառակ հաջորդականությամբ տեղաբաշխումը լուրջ խնդիրներ առաջացրեց: Մակայն այս կարևոր դրույթը, ցավոք, Հայեցակարգից բխող Նախագծում արտացոլված չէ:

Նախագծի տարբեր հոդվածներում առկա են անորոշ և բազմիմաստ ձևակերպումներ, որոնք խեղաթյուրում են ինչպես «հայրենադարձություն» հասկացությունը և հայրենադարձի կարգավիճակը, այնպես էլ կարող են բազմաթիվ չարաշահումների տեղիք տալ: Այսպես, Նախագծի **2-րդ հոդվածի** համաձայն՝ **հայրենադարձությունը** այլ պետություններում բնակվող ծագումով հայ անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատելու գործընթաց է: Իսկ **հայրենադարձը**՝ ծագումով հայ անձը, ով չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ օտարերկրյա քաղաքացի է և ընդունել է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, ով Հայաստանի Հանրապետու-

mindiaspora.am

33 Տե՛ս նույն տեղում:

34 Տե՛ս ՀՀ կառավարության 2010 թ. դեկտեմբերի 9-ին հաստատված հայեցակարգ, www.mindiaspora.am

թյուն վերադարձի հարցում **ունի պետական աջակցության կարիք** (ընդգծումը մերն է- L.Գ.) և «Հայրենադարձության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընթացակարգն անցնելուց հետո կամավոր մշտական բնակություն է հաստատում Հայաստանի Հանրապետությունում՝ ստանալով հայրենադարձի կարգավիճակ³⁵: Ակնհայտ է, որ Նախագծում «ունի պետական աջակցության կարիք» խիստ անորոշ ձևակերպման ամրագրումը օրենքի կիրառման ժամանակ կարող է լուրջ կանայականությունների տեղիք տալ: Այդ ձևակերպումից պարզ չէ, թե ով և ինչ չափանիշներով պետք է պարզի հայրենադարձվածի պետական աջակցության կարիք ունենալ-չունենալը, և առհասարակ՝ որ՝ տեսակի աջակցության մասին է խոսքը: Եվ դա այն դեպքում, երբ Հայեցակարգի **4-րդ գլխի 24-րդ** կետով սահմանված է, որ «Հայրենադարձության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում հայրենադարձվելու իրավունքը պետք է վերապահվի անխտիր բոլոր հայերին:

Նախագծի նույն հոդվածով հայրենադարձի կարգավիճակը հաստատող փաստաթուղթ է հոչակվում սահմանված նմուշի հայրենադարձի վկայականը, սակայն հստակ չէ, թե ով է սահմանելու նրա ձևն ու հաստատելու այն: Եթե Նախագծի **16-րդ հոդվածի 1-ին** մասի համաձայն՝ հայրենադարձության դիմումի օրինակելի ձևը հաստատում է ՀՀ կառավարությունը, ապա տրամաբանորեն այս ոչ պակաս կարևոր փաստաթղթի ձևի սահմանումն ու հաստատումը նույնպես կարող է իրականացնել ՀՀ կառավարությունը:

Նախագծի **6-րդ հոդվածի** համաձայն՝ հայրենադարձվել ցանկացողները կարող են դիմում ներկայացնել պետական լիազոր մարմին կամ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական (հյուպատոսական) ներկայացուցչություն, սակայն պետք է հստակեցնել, թե ինչպե՞ս պետք է ներկայացվի դիմումը, եթե ելքի պետությունում առկա չէ ՀՀ դիվանագիտական (հյուպատոսական) ներկայացուցչություն:

Նախագծի **7-րդ հոդվածի 2-րդ մասի** համաձայն՝ ծագումով հայ լիները, բացի անձնագրի, ծննդյան վկայականի, մկրտության փաստաթղթի, ինչպես նաև նրա բնակության երկրի հայ համայնքային կառույցի կամ եկեղեցական թեմի կողմից տրված փաստաթղթերից, որոշվելու է նաև նշված անձի հետ անցկացված հարցազրույցի արդյունքներով³⁶: Ճիշտ է, հարցազրույցի մեթոդը որոշ երկրներում կիրառվել է անձի ազգությունը որոշելու համար, օրինակ՝ Իսրայելում, երբ հրեա կարող էր ճանաչվել սիոնիզմի գաղափարները ընդունող անձը, սակայն նաև սրա հետևանքով այդ պետությունը հետագայում կանգնեց օրենսդրական փոփոխությունների միջոցով ոչ իսկական հրեաների հարցի կանոնակարգման խնդրի առաջ: Ուստի, կարծում ենք, միանգամից պետք է հստակեցնել, թե ով է անցկացնելու հարցազրույցը և ինչպե՞ս է տվյալ անձի սուբյեկտիվ պատասխանների հիման վրա պարզվելու նրա հայ լինելը և ինչպե՞ս են հաստատվելու հարցազրույցի արդյունքները: Քանի

35 Տե՛ս «Հայրենադարձության մասին» օրենքի նախագիծ, <http://www.mindiaspora.am/am/Projects>

36 Տե՛ս նույն տեղում:

դեռ այս հարցերի պատասխանները չկան, առայժմ կարելի է առաջնորդվել ՀՀ «Քաղաքացիության մասին» օրենքի դրույթներով և արհեստական հակասություն չառաջացնել այս երկու իրավական ակտերի միջև:

Նախագծի **9-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ հայրենադարձի կարգավիճակ տրվում է ծագումով հայ այն անձանց, որոնք մշտապես կան **առավելապես** (ընդգծումը մերն է- Լ.Գ.) բնակվում են այլ պետություններում³⁷: Կամայական մեկնաբանություններից խուսափելու համար հարկավոր է հստակեցնել մեր հայրենակիցների՝ այլ պետություններում բնակվելու ժամկետները:

Նույն հոդվածի **1-ին մասի 3-րդ կետում** նշված է, որ հայրենադարձի կարգավիճակ կարող է տրվել նաև այն անձանց, ովքեր եղել են ՀՀ քաղաքացիներ և ընդունել են այլ պետության քաղաքացիություն **առնվազն 15 տարի առաջ**³⁸ (ընդգծումը մերն է- Լ.Գ.): Կարծում ենք, «առնվազն 15 տարի առաջ» բառակապակցությունը արհեստական խոչընդոտ կարող է հանդիսանալ հայրենադարձի կարգավիճակ ստանալու համար, ուստի այդ ձևակերպումը պետք է ընդհանրապես հանվի:

Նախագիծը կարող է հարստացվել միջազգային փորձի հիման վրա՝ օգտվելով այն իրավական մեխանիզմներից, որոնք կիրառվում են տարբեր երկրներում: Օրինակ՝ **Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ հայրենադարձին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն տրամադրվում է Հայաստանի Հանրապետություն ժամանելուց հետո՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով³⁹: Մինչդեռ, հաշվի առնելով որոշ երկրների, օրինակ՝ Լեհաստանի փորձը, որը հայրենադարձի վիզայի հիման վրա երկիր ժամանող հայրենակիցներին քաղաքացիություն է շնորհում հենց անձի՝ սահմանը հատելու պահին, հարկավոր է էթնիկ ներգաղթողների և հայրենադարձների համար սահմանել ՀՀ քաղաքացիության ձեռքբերման առանձին կարգ՝ համապատասխան փոփոխություններ կատարելով ՀՀ «Քաղաքացիության մասին» օրենքում:

Նախագծի **12-րդ հոդվածով** նախատեսվում է որոշակի արտոնություններ տրամադրել հայրենադարձներին, սակայն հստակեցված չեն դրանց մեխանիզմները, միայն նշվում է, որ արտոնությունների կարգը պետք է սահմանվի ՀՀ կառավարության կողմից: Հստակ չէ, թե, օրինակ, հայրենադարձներին արտոնյալ վարկերի, ժամանակավոր կացարանների, լեզվի ուսուցման անվճար դասընթացների, երիտասարդ անապահով ընտանիքների նպաստների և այլ ֆինանսական ծախսերը ինչ աղբյուրներից են տրամադրվելու: Կարծում ենք՝ այս ծախսերը պետք է համարվեն պետական պարտավորություն և կատարվեն պետական բյուջեից: Եթե հաշվի առնենք միջազգային փորձը, ապա հայրենադարձների ֆինանսական ծախսերը միանվազ նպաստով կարգավորվում են սահմանը հատելուց անմիջապես հետո, իսկ որոշ ծախսեր, օրինակ՝ ձանապարհածախսը, որոշ դեպքերում հատուցվում է նախկին բնակության երկրում՝

37 Տե՛ս նույն տեղում:
38 Տե՛ս նույն տեղում:
39 Տե՛ս՝ նույն տեղում:

ՀԻՄՆԱԲԱՐԵՐ

Ե (ԺԵ) քաղթ, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

դիվանագիտական ներկայացուցչության միջոցով:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ նախևառաջ թե՛ Հայեցակարգը և թե՛ Նախագիծը առավել ձիշտ կլինեք վերնագրել համապատասխանաբար՝ «Հայրենադարձության և էթնիկ ներգաղթի գործընթացի կազմակերպման հայեցակարգ» և «Հայրենադարձության և էթնիկ ներգաղթի մասին» օրենք ձևակերպումներով և ըստ այդմ՝ համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարել ոչ միայն այդ, այլև տվյալ խնդիրների լուծմանն առնչվող ՀՀ բոլոր օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում:

Անշուշտ, մեր ներկա շարադրանքում թվարկված եվրոպական պետություններում ու Իսրայելում առկա միգրացիոն գործընթացները «Մեկ պատուհան» սկզբունքի միջոցով կարգավորելու փորձը գործուն մեխանիզմ է, սակայն պետք է հաշվի առնել տեղական առանձնահատկությունները: Հայաստանում «Մեկ պատուհանի» ներդրումը նպատակահարմար է կատարել մեկ տանիքի ներքո՝ ընդհանուր ներգաղթողների պատուհանից առանձնացնելով էթնիկ ներգաղթողներին: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը ազգային պետություն է, և նրա քաղաքացիների գերակշիռ մասը ազգությամբ հայեր են, ինչպես նաև հայ ժողովրդի աշխատանքային լինելու հանգամանքը, կարծում ենք՝ հայրենադարձության և էթնիկ ներգաղթի ձիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է կառուցվածքային փոփոխություններ կատարել տվյալ ոլորտում արդեն գործող Հայաստանի պետական մարմիններում, հստակեցնելով յուրաքանչյուրի գործառնական պարտականությունները և ապահովելով նրանց գործունեության թափանցիկ ընթացակարգերը: Բոլոր դեպքերում նշված գործընթացներում անպայմանորեն պետք է հաշվի առնվեն ինչպես պատմական իրողությունները, այնպես էլ «Մեծ հայրենադարձության» դասերն ու միջազգային փորձը:

Ամփոփելով նշենք, որ ապագայի միգրացիոն գործընթացներում Հայաստանը պետք է առաջնորդվի ոչ թե ներկայիս իրավիճակային լուծումներով, այլ վաղօրոք մշակված հայեցակարգով և արդյունավետ իրավաօրենսդրական մեխանիզմներով:

Summary

MAIN PROBLEM OF JURIDICAL SETTLEMENT OF REPATRIATION OF ARMENIANS OF DIASPORA

In the context of “Great repatriation” and international experience

Lusine. A. Gevorgyan

At present the Republic of Armenia is facing a number of serious migratory challenges, the first of which is the migration of the Armenians from the country at a rapid pace. Taking into account the situation, the Republic of Armenian should take steps to slow down the paces of migration and pave the way for the opposite process – repatriation.

To find the proper resolution for the following main issues, some adjustments should be made in the relevant laws of the RA, moreover, it is necessary to make some structural changes in the corresponding organs of the RA, which would help to clarify the functional responsibilities of each and to ensure fair and honest activity.

ՀԻՄՆԱԲԱՐՁՐԵՐ

Ե (ՃԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես